
ՀԱՅ-ՀՈՌՈՄՆԵՐԸ (ՔԱՂԿԵԴՈՆԻԿ ՀԱՅԵՐԸ) ՀՈՒՆԱԿԱՆ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

Կրետե կղզու համալսարանի փիլիսոփայության (այն է՝ հասարակագիտության) ֆակուլտետի (քաղաք Ռեթիմնո) դեկան, անվանի բյուզանդագետ Նիկոս Գ. Զվորոնոսից հայոց պատմություն և հայ-բյուզանդական հարաբերություններ դասավանդելու հրավիրված (1983 թ.), տեղում երեք ամսվա ընթացքում բավականին ազատ ժամանակ ունենալով, մանրամասն ծանոթացա ֆակուլտետի գրադարանի հարուստ հավաքածուին, հատկապես հունական հազվագյուտ պարբերականներին՝ որոնելով գլխավորապես հայոց և հայոց պատմությանն առնչվող նյութեր: Այդ նյութերի մի ժողովածու, երեք առանձին հոդվածներով՝ «Նյութեր գաղութահայ պատմության» ընդհանուր վերտառությամբ լույս է տեսել «Լրաբեր հասարակական գիտությունների» պարբերականում¹: Վերահրատարակվել է մեր «Հայ-բյուզանդական հետազոտություններ»-ի առաջին հատորում²: Ստորև հայերեն թարգմանությամբ ներկայացվող երեք հոդվածները վերաբերում են հայ-հռոմներին, որոնք, բնիկ ակնոցիներ³, 1622–1628 թթ. Աբազա փաշայի գլխավորած ապստամբության ժամանակ ստիպված եղան գաղթելու արևմուտք և հաստատվելու Բյութանիայում, նրա կենտրոն Նիկոմեդիա քաղաքում և շրջակա գյուղերում:

Առաջին հոդվածի հեղինակ Գ. Պասխալիդիսը Բյութանիայի միայն երկու գյուղի՝ Օրթաքյոյի և Խուդիի բնակչությունը XX դարի սկզբում հաշվում էր 8000 հոգի, «բոլորն էլ հայախոս», բայց իր պնդմամբ՝ ազգությամբ հույն:

Լոզանի պայմանագրի 30–45-րդ հոդվածներով (30-1-1923 թ.) հունական կառավարության հաշվումներով շուրջ 1.500.000 փոքրասիական հույներ, այդ թվում նաև Բյութանիայի հայ-հռոմները, արմատախիլ արվեցին իրենց տներից ու բնակատեղիներից և հաստատվեցին Հու-

¹ ՀԽՍՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, -9, էջ 74–82, № 10, էջ 74–87, № 11, էջ 78–90:

² Հ. Բ ա թ թ ի կ յ ա ն. Հայ բյուզանդական հետազոտություններ, հ. 1, Երևան, 2002, էջ 554–591:

³ Ակնի հայ-հռոմների մասին հանգամանորեն տե՛ս Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց. Թորոս աղբար, հ. 1, Կոստանդնուպոլիս, 1879, Հ. Ճ ա ն ի կ ե ա ն. Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, Թ. Ա զ ա տ յ ա ն. Ակն և ակնոցիք, Իսթանպուլ, 1943, Ա. Բ է չ յ ա ն. Ակն և ակնոցիք, Փարիզ, 1952:

նաստանում: Հայ-հռոմները բնակություն հաստատեցին Էվբիա կղզում և Սալոնիկ քաղաքին մերձակա Դիավատա շրջանում: Հենց սկզբից նրանց էությունը հույների շրջանում բուռն հետաքրքրություն ներկայացրեց, համարվեցին հայախոս հույներ, որի պատճառը ամենից առաջ «հայ-հռոմի» երկրորդ բաղադրիչն էր, որն անգիտությամբ (թերևս գիտակցորեն), ստորև բերվող «հույն» հեղինակների հոդվածներում սխալ էր մեկնաբանվում:

Սկսենք մի քիչ հեռվից: «Հռոմայեցի» (‘Ρωμαῖος) անվանումն էր Հռոմի բնակիչների, ավելի ուշ՝ ամբողջ Հռոմայեցվոց կայսրության: Վերջինիս Արևելյանի և Արևմտյանի բաժանումից հետո, հռոմայեցի էին կոչում արևելյան բաժնի, որպես հնի՝ “Imperium Romanum”-ի բնակիչների, հակառակ իրենց զարգացած գուտ հունական քաղաքակրթության: «Բյուզանդացի» տերմինը գործածվեց շատ ավելի ուշ: Բյուզանդական ժամանակաշրջանում «բյուզանդացի» էին անվանում Կոստանդնուպոլսի (Բյուզանդիոնի) բնակիչներին: «Հռոմայեցի» անվանումը գոյատևեց մինչև կայսրության վերջին պահը: Փիլիսոփա Գևորգ Պլեթոն Գեմիստոսի (1360–1452 թթ.) Մանուել Բ Պալեոլոգոս կայսեր (1391–1425 թթ.) ուղղած կոչերը, որպեսզի կայսրությունը կոչվի Հունական (Հելլենական), արձագանք չգտան: Թեև բյուզանդացիները հռոմայեցի էին իրենց անվանում, արևմտականները նրանց «Գրեկ» էին կոչում: Շատ խոսուն է այն դեպքը, երբ Կրեմոնայի եպիսկոպոս Լիուտպրանդը (920–972 թթ.) հայազգի Նիկեփոր Բ Փոկաս կայսրին (963–969 թթ.) Գերմանիայի թագավոր Օթոնի (963–976 թթ.) նամակը բերեց, որում կայսրը կոչված էր “imperatorem Graecorum”, իսկ կայսրությունը՝ “Graecorum Imperium”, Նիկեփոր Փոկասը պատռեց նամակը՝ պահանջելով իրենց կոչեն «Հռոմայեցիների կայսր»:

Անցնենք մեր «հռոմներին»: Հայտնի է, որ հայոց շրջանում «հռոմներ» էթնիկոն չէ, նշանակում է *հունադավան հայ* (քաղկեդոնիկ), և դա ոչ մի կասկածի ենթակա չէր ու չէ: Սակայն հույների շրջանում կամ խնդրի անգիտությունից, կամ էլ պարզապես գիտակցորեն, ձգտում կա շարունակելու միջնադարում (‘Ρωμαῖος) -ին (հույնին) տրված ցեղանվան նշանակությունը: Դրանում ամենից կրքոտ հանդես են գալիս *dΦομε* («շուռ տված») «մտավորական» հայերը, ովքեր կաշվից դուրս են գալիս հրաժարվելու ոչ միայն իրենց ազգությունից ու դավանանքից, այլև ընդհանրապես մերժելու հայ-հռոմների հայությունը: Մեր համոզմամբ այդպիսիք են ստորև հայերեն թարգմանությամբ բերված երեք հոդվածների հեղինակները:

Առաջին երկու հոդվածների հեղինակ Գ. Ա. Պասխալիդիսը իր խոստովանությամբ Բյութանիայի Խուդի կոչվող բնակավայրից է, «այն շրջանից, որի հույն բնակչությունը հայախոս է», անտարակույս՝ հայ-հռոմներ: Եթե նա հայ-հռոմներին հույն է համարում, ապա պետք է

ընդունել, որ ինքը ևս իր ասած «հայախոս հույներից» է, թեև այդ մասին նա հատուկ չի նշում: Գ. Ի. Անաստասիադիսը, սույն շարքի երրորդ հոդվածի հեղինակը, պարզ ցույց է տալիս, որ Գ. Պասխալիդիսը Հունաստանում հաստատված Բյուզանդիայի հայ-հոռոմներով բնակեցված վայրերից է սերում: Գ. Պասխալիդիսը արտակարգ կրքոտությամբ պաշտպանում է հայ-հոռոմների ազգությամբ հույն լինելը, փորձում հայ-հոռոմների շրջանում Կիբելա աստվածության պաշտամունքի և նրան նվիրված տոնի հետքեր «հայտնաբերել», ուստի նրանց ծագումը երկու հազարամյակ ու ավելի «հնացնել» և «հունացնել»: Վերջապես հայ-հոռոմների նիստուկացի, սովորույթների գերազանց իմացությունը չի կարող կասկած չհարուցել մեր հեղինակի *dōnme* («շուռ տված») հայ-հոռոմներից սերած լինելը: Եթե դա այդպես է, ապա կարելի է և կասկածանքով վերաբերվել նրա շինծու *Պասխալիդիս* ազգանվանը: «Պասխա» հունարեն նշանակում է «գատիկ», ուստի Պասխալիդիսը ոչ այլ ինչ է, քան Չատիկյանի հունարեն թարգմանությունը⁴:

Ինչ էլ ինի, Պասխալիդիսի առաջին հոդվածի վերջին նախադասությունը հաստատում է հայ-հոռոմների հայության մասին իրական փաստը ժխտելու սնանկությունը. «Արդոք չկա՞ միջոց, – գրում է նա, – որ այս ամեն ինչով հույները (իմա՛ հայ-հոռոմները – *Z. F.*) սովորեն հունարեն և այդ լեզվով արտահայտեն իրենց մտքերը, գաղափարներն ու խոհերը: Այո՛, նրանց միակ ցանկությունը հայերենը մոռանալն է և որպես մայրենի լեզու հունարենը ձեռք բերելը»: Իր խոհերը նա ավարտում է այսպես. «*Բայց մինչև օրս գործի դրած նրանց ջանքերն ապարդյուն մնացին*»: Էլ ինչպե՞ս հասկանալ այդ «*միակ ցանկությունը*»: Ավելորդ չէ հիշատակել այդ հայ-հոռոմների՝ հայոց լեզվին հավատարիմ մնալու երկարատև ցանկությունն ու ջանքերը: Անգամ 1980-ական թվականների վերջերին իմ աթենահայ բարեկամ, մտավորական Հակոբ Ջելալյանն այցելել է Էվբիա կղզու հայ-հոռոմներին: Իր ասելով շատ սահուն խոսում էին հայերեն՝ Ակնի բարբառով, երգում Ակնի շրջանի երգեր, և նրանց ուղղված իր հարցին, թե «ո՞վ եք դուք», պատասխանել են, թե «մենք հայ-հոռոմ ենք»: Նրանց երգերի ձայնագրության ձայներիզը ժամանակին նա ուղարկել է ինձ՝ հանձնելու երաժշտագետ Ռոբերտ Աթայանին, ինչը և ես կատարեցի:

Գ. Ի. Անաստասիադիսի, հերթական հայ *dōnme*-ի (տե՛ս այս շարքի երրորդ հոդվածը) 1948-ին արտահայտած վստահ հայտարարությունը, թե «Հայ-հոռոմներն այլևս անցան պատմության գիրկը, քանի որ վերապրածները և Հունաստանում հաստատվածները ի սկզբանե անտի ունենալով հունական վառ գիտակցություն, արդեն ձեռք բերեցին և

⁴ Գ. Ի. Անաստասիադիսը մի շարք անվանի հայ-հոռոմների թվարկելով, նրանց մեջ հիշում է և Գ. Պասխալիդիսին (տե՛ս ստորև նրա հոդվածում):

հունարեն լեզուն», չի համապատասխանում իրականությանը: Անտարակույս, նրանք ձեռք բերեցին հունարեն լեզուն, բայց ամեննին չմոռացան իրենց մայրենին՝ հայերենը: Վկան՝ հիշածս Հակոբ Ջելալյանը:

Վերևում անդրադարձանք «Պասխալիդիս-Չատիկյանին»: Առաջ անցնելով՝ «Անաստասիադիսի» մասին էլ անդրադառնանք նույն ելակետից: «Անաստասիս» հունարեն նշանակում է «հարություն», ուստի պարզ չէ՞, որ այս դեպքում ևս հանդիպում ենք «Պասխալիդիս-Չատիկյան» եղելության, որ «Անաստասիադիսը» Հարությունյանի հունարեն թարգմանությունն է⁵:

Գ. Ա. Պասխալիդիսի հողվածները գրված են նախքան հայոց ցեղասպանությունը և Լոզանի պայմանագիրը: Ուստի հայ-հոռոմների տվյալ շրջանների բնակավայրերի, բազում այլ խնդիրների վերաբերյալ նրանց տվյալները շատ արժեքավոր են:

Հայերեն թարգմանությամբ ստորև բերված երրորդ հողվածը, ինչպես նշեցինք, պատկանում է Գ. Ի. Անաստասիադիսին: Նա որպես ավելի լուրջ հետազոտող, շարադրելով հայ-հոռոմների ծագման և էության մասին արտահայտված տարբեր կարծիքները, գրում է. «Ավելի տրամաբանական է և գիտական ընդունել առաջին վարկածը, այն է՝ հոռոմների հայկական ծագումը, որը չի բավարարում Պասպադուպուսին և նրա հայրենակիցներին, որոնք հաստատ հավատացած են, որ սերում են Քսենոփոնի տասը հազար զինվորներից»:

Անաստասիադիսը մեկ առ մեկ թվարկում է Ակնի (Էգինի) շրջանի հայ-հոռոմների գյուղերը, խոսում նրանց հայկական դպրոցի մասին, ընդգծում, որ «իրենց մայրենի լեզուն նախ և առաջ հայերենն է, ապա՝ թուրքերենը: Հայերենը դպրոցում էին սովորում»: Եվ շարունակելով՝ նշում է. «Եկեղեցական արարողությունները հոգևոր երգերի մի խառնուրդ էր՝ թուրքերեն, մեծ մասը հայերեն և փոքրաթիվ հունարեն: *Բայց եկեղեցի հաճախողները հունարենները չէին հասկանում*»: Պարզ է, լինելով հունադավան, պարտավոր էին առանձին աղոթքներ, արարողության կտորներ հունարեն արտասանել:

ՀՐԱԶ ԲԱՐԹԻԿՅԱՆ *

⁵ Հայաստանում բնակվող հույներից ոմանք, ում ազգանունները վերջանում էին ռուսական -ov-ով, Խորհրդային Միության փլուզումից հետո այն փոխարինեցին հունարեն «...ιδης-ιάδης» (իդիս-իադիս)-ով:

*Ստորև բերված հողվածների տողատակի ծանոթագրությունները հողվածագիրներին են: Իսկ նրանց, որոնց վերջում փակագծի մեջ առկա են մեր անվան-ազգանվան սկզբնատառերը (Հ. Բ.) պատկանում են մեզ:

Γ. Α. ΠΑΣΧΑΛΙΔΗΣ, ΑΡΜΕΝΟΦΩΝΟΙ ΕΛΛΗΝΕΣ
ΕΝ ΧΟΥΔΙΩ ΤΗΣ ΜΙΚΡΑΣΙΑΣ ('Εθνολογικαὶ σημειώσεις),
ΕΒΔΟΜΑΣ, ΕΠΙΘΕΩΡΗΣΙΣ ΚΟΙΝΩΝΙΚΗ ΚΑΙ ΦΙΛΟΛΟΓΙΚΗ, ΠΕΡΙΟΔΟΣ Β΄,
ΕΤΟΣ Η΄, ΑΡΙΘ. 45, ΑΘΗΝΑΙ, 28 ΔΕΚΕΜΒΡΙΟΥ 1891
Κ. Α. ΠΑΠΑΔΑΚΗ, ΦΩΤΟΔΟΧΕΙΟΝ ΤΩΝ ΤΥΠΟΓΡΑΦΕΙΩΝ ΚΑΙ ΕΚΔΟΣΕΩΝ
(ΑΔΕΛΦΟΙ ΠΑΠΑΔΑΚΗ), «ΖΕΦΕΥΣΤΑ» ΖΗΣΙΟΠΟΥΛΟΥ ΚΑΙ
ΒΕΝΙΖΕΛΟΥ ΚΑΙ ΝΙΚΟΛΑΪΔΟΥ, ΤΟΜΟΣ Β΄, ΣΑΡΔΕΝΙΑΙ, 1891.

Ա ԽՈՒՂԻՆ

Խուղին ունի երկու անուն, Խուղի և Սարաջըր ուստու¹: Խուղի են կոչում քրիստոնյաները, քանզի ինչպես երևում է, այստեղ գաղթածները եկել են Էգինի համանուն գյուղաքաղաքից, իսկ Սարաջըր ուստու՝ թուրքերը, որպես Փոքր Սարաջըր թուրքական գյուղից վերև ընկած: Երկրորդ անունը պաշտոնական է, և այդպես է նա կոչվում կառավարական տարբեր փաստաթղթերում: Գտնվում է Բյութանիայում, Գեյվեի Հուստինիանոսյան կամրջի մոտ գտնվող Կոստանդնուպոլսից Անկարա տանող երկաթգծի կայարանից ձիով երկու ժամ հեռավորության վրա: Այս գյուղաքաղաքը շատ բարձրադիր տեղում է գտնվում, ծովի մակերևույթից հազար մետր բարձրության վրա և բավականին զառիթափ տեղում, այնքան զառիթափ, որ թե՛ ստորոտում և թե՛ զագաթում կանգնողը առանց էական սխալի կարող է հաշվել նրա բոլոր տները: Գյուղի միջով անցնում է մի դերե²՝ ցամաքած գետ, որն այն բաժանում է երկու մասի: Այդ դերեն, իր ընթացքում ջրեր ստանալով այլ աղբյուրներից և առուներից, դառնում է բավականին հուժկու մի հեղեղատ, որը թափվում է Բյութանիայի պատմական Գալլոս գետի մեջ: Գյուղաքաղաքն ունի 450 ընտանիք կամ տուն բնակչություն, որոնցից 250 քրիստոնյաներ են, 200-ը՝ թուրքեր: Սակայն յուրաքանչյուր ընտանիքատեր ունի նվազագույնը վեց երեխա, որով ընտանիքը բաղկացած է լինում ութ անձից: Սրան ավելացրեք, որ հաճախ երեք կամ չորս եղբայրների ընտանիքներ՝ իրենց հոր կենդանության օրոք, կազմում են մեկ ընտանիք՝ բաղկացած 20-30 հոգուց, մի ամբողջ գերդաստան, որի նահապետը ծերունի պապն է, որը տան մեջ ունի իր պատվավոր տեղը՝ բուջախը կամ օջախը:

Բ ԼԵԶՈՒՆ

Բնակիչների խոսակցական լեզուն է թուրքերի համար թուրքերենը, իսկ քրիստոնյաների համար՝ հայերենը: Ձեզանից շատերը, հարկավ, տեղյակ էիք, որ կան թուրքախոս, ալբանախոս, վալախախոս հույներ, բայց որ կան և

¹ Pınar üst – վերին (Չ. Բ.):

² Dere – անտանը ցամաքող գետ (Չ. Բ.):

հայախոս հույներ, հավանաբար չգիտեիք: Այդուհանդերձ կան այդպիսիք և ոչ քիչ: Կոչվում են հայ-հոռոմներ, այսինքն՝ հայ-հույներ: Նրանք գտնվում են Հայաստանի Էգին նահանգում: Ինչ վերաբերում է Խուդիին, Օրթաքոյին և Ֆունդուկլիին, ապա դրանք Բյութանիայում են: Ասացի, որ բնակիչները քրիստոնյաներ են, բայց քրիստոնյա ասելով ես նկատի ունեմ մեզ՝ ուղղափառներին [իմա՝ հունադավաններին, քաղկեդոնիկներին – Ն. Բ.], քանզի հարկավ քրիստոնյա են և հայերը: Այժմ, որպեսզի հասկանաք, թե ինչպես ուղղափառ հույն լինելով հայերեն են օգտագործում, անհրաժեշտ է, որ մի փոքր կանգ առնեմ ավանդության վրա, քանզի գրավոր պատմություն չունենք: Այսպիսով, ըստ ավանդության, Խուդիի, Օրթաքոյի և Ֆունդուկլիի բնակիչները Էգինից գաղթած հայ-հույների հետնորդներն են, որ այստեղ՝ [Բյութանիա] են եկել 250 տարի առաջ, ով գիտե ինչի հետևանքով³: Ստույգ ու անկասկածն այն է, որ նրանք այնտեղից են եկել, քանզի և՛ Խուդի, և՛ Ախ-կիրակ անունները (իմա՝ Ադրերակ – Ն. Բ.), որոնք դեռ այսօր ծերունիների կողմից տրվում են Օրթաքոյին և Ֆունդուկլիին, այժմ էլ Էգինում գտնվող գյուղերի անուններ են, ինչպես և «Ակն» անունը, որ տրվում է սուրբ Գևորգի սրբազան աղբյուրին: Հենց այդպես են կոչվում և այնտեղի բուսառատ վայրերը, որտեղ բխում է սուրբ համարվող ջուր: Բացի այդ, բնակիչների լեզուն էլ շատ նման է Էգինի բնակիչների լեզվին, որով նախքան սրանց մասին խոսելը, պետք է կանգ առնել Էգինի [հայ-հոռոմների] վրա: Էգինի հայ-հույների մասին գոյություն ունի երեք վարկած: Համաձայն մեկի՝ նրանք պատկանում են հայոց ցեղին, բայց քանի որ եկեղեցիների Արնեյյան Ուղղափառ և Լուսավորչականի բաժանվելու ժամանակ նրանք չընդունեցին Արիոսի դավանանքը և հավատարիմ մնալով Մեծ եկեղեցուն շարունակեցին ղեկավարվել Բյուզանդիոնից ուղարկվող հույն հոգևորականների կողմից, սուրբ պատարագը ունկնդրել հունարեն, նրանց միջոցով հունարեն սովորել, ժամանակի ընթացքում իրենց հույն համարեցին, այնպես, ինչպես բուլղարները, սերբերը և ռումինացիները մինչև վերջերս իրենց հույն էին համարում: Ուստի, եթե որևէ մեկը նրանց անվաներ հայ, այդ բանը նրանք պիտի մեծ վիրավորանք համարեին, և արդար, քանզի նրանց զգացումները, գիտակցությունը, սիրտը, ամեն ինչը հունական են, ամենահունական: Մյուս կարծիքն այն է, որ նրանք ի սկզբանե անտի հույներ էին՝ կամ Քսենոփոնի՝ այնտեղ մնացած զինվորներից սերող, կամ Մեծն Ադեքսանդրի զինվորներից, որոնք հայուհիների հետ ամուսնացան: Իսկ երրորդ և վերջին վարկածն այն է, որ Էգինա կղզու⁴ մի գաղութն են, որտեղից էլ քաղաքի Էգին անունը: Ես իմ վրա չեմ վերցնում ջանքը ցույց տալու, թե այս կարծիքներից որ մեկն է ճշմարիտ, քանի որ դա իսկապես իմ ուժերից վեր է:

³ Ինչպես նշեցինք սկզբում, նրանք ստիպված գաղթեցին 1622–1628 թթ. բռնկված՝ Արագս փառայի գլխավորած ջելայիների ապստամբության ժամանակ (Ն. Բ.):

⁴ Կղզի Էգեյան ծովում, Մարոնիկոսի ծոցում, Ատտիկեի մարզի և Պելոպոնեսի մեջտեղում: Անվանումների սուկ համահնչյունության հետ կապված անլուրջ ստուգաբանություն է (Ն. Բ.):

Գ

ՆԻՍՏՈՒԿԱՑ, ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ

Բնակչության հիմնական զբաղմունքը շերամապահությունն է: Յուրաքանչյուրն ունի թթենիների պարտեզներ, որոնք էլ մշակում է: Գյուղացու հարստության աստիճանը որոշվում է ունեցած հողատարածության մեծությամբ: Նրանց միակ եկամուտը բոժոժն է, և երբ բերքը շատ է լինում, տարին համարվում է երջանիկ, հակառակը՝ եթե այն քիչ լինի: Նրանց մի մասը շերամներն աճեցնում են իրենց տանը, մյուսները հատուկ այդ նպատակի համար կառուցված շինություններում: Որդի բուծման արհեստանոցները գտնվում են ցածրում, դաշտում, գյուղից մեկ ժամ ճանապարհ հեռավորության վրա:

Նրանց նիստուկացի և սովորույթների մասին ուզում եմ ավելի մանրամասն խոսել: Բնակիչները շատ հյուրասեր են: Բարքերը՝ ամենամաքուր: Եվրոպական կեղծ քաղաքակրթությունը նրանց շրջանում դեռ մուտք չի գործել և երանի երբեք մուտք չգործի: Կրոնական զգացումները բարեբախտաբար շատ կենդանի են ու զարգացած, որով պահքը խախտողին կամ տոն օրն աշխատողին պարսավում են: Բայց մոլեռանդ էլ չեն: Դրա համար էլ ոճիրները շատ հազվադեպ են: Քսան տարվա ընթացքին միայն մեկ սպանություն է տեղի ունեցել, իսկ դիմացինին վերք հասցնելը կամ ինքնասպան լինելը և օրինազանցությունների մյուս բոլոր տեսակներն անձանոթ են:

Ապրում են համեստ, բայց եթե հյուր ունենան, ջանք են թափում սեղան դնել բազմապիսի և լավ խորտիկներ: Եթե հյուրն այնտեղյակ է նրանց ընտանիքի կյանքին, բոլորին Լուկուլլոսներ⁵ պիտի կարծի: Անցյալում սովորություն կար լվանալ հյուրի ոտքերը, բայց այժմ այդ հուներական սովորությունը⁶ վերացել է:

Տոն օրերը այցելությունների օրեր են: Հյուրերին օրվա ընթացքում երեք անգամ սեղան են բացում՝ առավոտյան, կեսօրին և երեկոյան:

Նշանադրություն է կատարվում բոլոր տարիքներում: Տասը կամ հինգ տարեկան երեխաներին նշանում են ծնողները, քանզի վերջիններից է կախված ամեն ինչ: Որդին կամ դուստրը ենթարկվում են ծնողքի վճռին: Հաճախ նշանում են երեխաներին անգամ նախքան նրանց ծնվելը: «Եթե երեխադ աղջիկ լինի, պիտի տղիս տաս», – ասում են: Եվ տրված խոսքը պահվում է, նշանը տրվում է՝ եթե երեխան աղջիկ ծնվի: Փոխանակվող նշանը սովորաբար մետաքսե չեմբեր է⁷, ինչ-որ ոսկեդրամ, որ փեսայի ընտանիքն ուղարկում է հարսի ընտանիքին: Նշանված են մնում մինչև ամուսնության հարմար տարիքը գալը՝ խուսափելով միմյանց տեսնել, այսինքն՝ փեսացուն հարսնացուին: Դրան հակառակ նրանց ընտանիքները միմյանց միջև շատ մտերիմ կապեր են հաստատում: Ամուսնության հարմար տարիք է համարվում տղայի

⁵ Ճոխ սեղան բացողներ (Չ. Բ.):

⁶ Ինչո՞ւ «հուներական», երբ գոյություն ուներ և հայերիս շրջանում (Չ. Բ.):

⁷ ցեմբեր – ձեռագործ թեթև գլխաշոր (Չ. Բ.):

համար 20-24 տարեկանը, իսկ աղջկա՝ 14-ից 18-ը: Ամուրի չի մնում և ոչ ոք, բացի հաշմանդամներից:

Հարսանիքները սովորաբար տեղի են ունենում սեպտեմբեր, հոկտեմբեր, հունվար և փետրվար ամիսներին: Խրախճանքն սկսվում է շաբաթ օրը և սովորաբար վերջանում չորեքշաբթի: Հյուրերին հրավիրելը տեղի է ունենում շահագրգռված ընտանիքների կողմից՝ մումի, նարնջի, լիմոնի կամ խնձորի ուղարկմամբ: Փեսան և հարսը իրենց հատուկ հրավիրյալներին միշտ խնձոր են ուղարկում: Նվագը սկսվում է շաբաթ օրը, սովորաբար փեսայի տանը, որտեղ պարում են փեսայի ընկերներն ու ազգականները մինչև կեսգիշեր: Բսկ հարսի տանը, ուր գնում է փեսան իր հրավիրած երիտասարդների հետ մոտ ժամը տասին, իրենց հերթին խրախճանք են անում հարսի ազգականներն ու ընկերուհիները:

Կեսգիշերին փեսան նվագով, հրավիրված ընկերներով, որոնք պետք է բոլորը չամուսնացած լինեն, իր տնից գնում է կնքահոր տուն, որտեղից և բոլորը ցրվում են: Փեսայի հետ մնում են միայն երկու կամ երեք ընկեր, որոնք գիշերում են այնտեղ: Նախապես, փեսան պետք է սափրվի: Առավոտյան եկեղեցու պաշտոնի ավարտից հետո, փեսա և կնքահայր, փեսայի ընկերները նվագով գնում են հարսի տուն: Տան դուռը փակ է լինում, որը բացվում է բազում նվերներով՝ դրամով, որ տրվում է կամ փեսայի և կամ կնքահոր և մնացած ազգականների կողմից: Վերջապես փեսան կնքահոր հետ մտնում է ներս, և մի քանի բուպե անց դուրս են գալիս հարսի հետ: Նրանց դուրս գալու պահին լուսամուտից հարսի գլխին զցում են դրամներ՝ գարու հետ խառնված, իսկ թաղի երեխաների մեջ սկսվում է այդ դրամները հավաքելու մրցում: Եվ այսպես նվագով գնում են եկեղեցի:

Եկեղեցում բացի կնքահորից ու կնքամորից, ներկա է լինում և՛ այսպես կոչված, փոքր փեսան, որը կանգնում է փեսայի կողքին՝ իր ուսերին ունենալով մետաքսե սպիտակ թաշկինակ և «Եսայա պարի ը» կոչով մյուսների հետ պարին է մասնակցում: Փոքր փեսան պետք է շատը տասը տարեկան լինի և կնքահոր ազգականը: Ուշագրավ սովորույթ է նաև այն, որ ամուսնական թափորի տուն վերադարձին, հարսի տուն մտնելուն պես, փեսայի ամենամոտիկ ազգական երեխան հանում է հարսի կոշիկները և նրան հողաթափեր տալիս, իսկ հարսը իր հերթին նրան տալիս է ձեռագործ թաշկինակ և համբուրում նրա ձեռքը: Այնուհետև սեղան են բացում, և սկսվում է խրախճանքը: Նախ մատուցվում է այսպես կոչված քեշկեկը (կորկոտը): Նույն կիրակի օրվա կեսօրից հետո նվագողները սկսում են գյուղի վերին մասից և հերթականությամբ գնում բոլոր հրավիրյալների տները: Եվ այսպես նվագի հնչյունների տակ գալիս են փեսայի տունը, որտեղ սկիզբ է առնում այսպես կոչված օզիկ-կը. սրահի մեջտեղը սեղան է դրվում, նրա վրա՝ պնակ: Յուրաքանչյուր եկողը փեսայի կամ հարսի համար նվեր է տալիս՝ դրամով: Այդ գործի համար հատուկ նշանակված մարդը մի քանի սովորական մաղթանքներով՝ նվիրողի հասցեին, հայտարարում է նվիրողի անունը, փեսայի կամ հարսի հետ ունեցած ազգակցության աստիճանը, ինչպես և նվերի քանակը: Այդ բանը տեղի է ունենում հատկապես հարսի համար, հատուկ կանանց սրահում: Ապա բոլոր

հրավիրյալները նստում են սեղան և փեսայի լցրած գինին խմում, և մեծ խանդավառությամբ խրախճանքը տևում է երկու-երեք օր:

Հարսը սովորաբար մինչև մայր դառնալը չի խոսում սկեսրայրի հետ, բացառությամբ եթե առկա է նորարարական ոգի՝ կամ սկեսրայրի և կամ էլ հարսի մոտ, երբ չխոսելը տևում է միայն մեկ-երկու ամիս:

Կնունքները կատարվում են երեխայի ծննդից 15 օրվա ընթացքում, և ոչ մի անգամ դրանից ուշ: Այստեղ նշենք, որ յուրաքանչյուր ընտանիք ունի իր կնքահայրը, որին ոչ մի ձևով չի կարելի փոխել, լինի պսակադրության, լինի մկրտության, եթե, հարկավ, նա ինքնաբերաբար ցանկանա իր իրավունքը ուրիշին զիջել, կամ ի վիճակի չլինի ամուսնության կամ կնունքի և այլնի ծախսերի տակից դուրս գալու:

Խոսակցական լեզուն, ինչպես ասացինք, հայերենն է: Սակայն բարևում են հունարեն՝ «կալիմերա և կալիսպերա» (բարի լույս, բարի երեկո): Խառը-խոռն օգտագործում են և հունարեն բառեր: Նրանց լեզուն, սակայն, հայերի լեզվից այնքան է տարբերվում, որ եթե Հայաստանի հայր գար այստեղ, չէր հասկանա նրանց, ոչ էլ նրանք պիտի նրան հասկանային, միայն մասամբ: Նրանց լեզուն տարբերվում է բուն հայերենից, ինչպես և նրանց նիստուկացը, և սովորույթները ոչ մի նմանություն չունեն հայոց սովորույթների հետ, և ես հենց դրա համար այսքան ընդարձակ խոսեցի նրանց սովորույթների մասին: Դա պարզ ցույց է տալիս, որ խախուտ են և միանգամայն կեղծ այն մարդկանց պնդումները, թե սրանք անցյալում հայեր էին:

Անցնենք եկեղեցու հարցերին:

Սովորաբար քահանաները երկուսն են լինում: Նրանք բառիս բուն իմաստով հոգևորականներ են, թեև անգրագետ, բայց շատ բարի մարդիկ, կատարում են իրենց պարտականությունները անշահախնդրությամբ և առաքելականորեն: Պատարագը կատարում են հունարեն, առանց հասկանալու այն, մի բան, որ շատ է նրանց տխրեցնում: Մեկ-մեկ Ավետարանը կարդում են թուրքերեն թարգմանությամբ, իսկ մեծ տոներին կարդում են և Առաքյալն ու Սողոմոնի առակները: Այս քահանաները գիտակցելով իրենց անգրագիտությունը, հպարտ չեն, թեպետև քահանան այդ տեղերում առաջին մարդն է համարվում: Նա ժողովրդի վրա այնպիսի ուժ ունի, ինչպիսին ունի վարչապետը պատլամենտական վարչակարգում: Քահանան համարվում է իմաստության արկղ, իսկ բազում տարիներ սովորող երեխաներին զարմանքով հարց են տալիս. «Ի՞նչ է, նպատակ ունես քահանա դառնալու»: Մոր՝ իր որդուն տված գերագույն մաթթանքն այն է, որ նրան քահանա տեսնի: Բոլորը՝ մեծ ու փոքր, ծերունիներ ու երեխաներ, տղամարդիկ ու կանայք, երբ քահանան անցնում է, ոտքի են կանգնում, հոգ չէ, որ այդ քահանան երկու շաբաթ առաջ ջաղացպան էր կամ փայտահատ: Այժմյան երկու քահանաներն էլ միայն տարրական դպրոց են տեսել, իսկ նրանցից մեկը հազիվ է խոսում հունարեն: Այստեղ ավելացնենք, որ տեղում [Վատիկանի] պրոպագանդա՞ գոյություն չունի, ոչ ո-

⁸ Propaganda Fidei – 1622 թ. ստեղծված կաթոլիկ կարդինալների հոգևորությամբ զբաղվող կազմակերպություն (Հ. Բ.):

րովհետև նրանք իրենց ցանցը չզցեցին, այլ որովհետև հակահարված ստացան:

Մի քանի խոսք էլ թուրքերի մասին: Մրանք թվով գրեթե հավասար են քրիստոնյաներին, միայն տառիմացության դպրոց ունեն, այն էլ ոչ միշտ գործող: Այն ժամանակ, երբ մերոնց 90 տոկոսը գրաճանաչ է, այդպիսիք թուրքերի մեջ հազիվ 15 հոգի լինեն: Թուրքերը, լինելով քրիստոնյաներից աղքատ, նրանց հետ հաշտ են ապրում, քանզի նրանց կարիքն ունեն: Մրանք ևս շերամապահությամբ են զբաղվում, աշխատում են նաև պարտեզներում և այգիներում որպես հող փորողներ, կամ փայտահատներ և շատ հեզաբարո են և աշխատասեր: Մոլեռանդություն չունեն, մի բան, որ շատ է գովելի: Բազմակնությունը կարծես թե նրանց համար թույլատրելի չէ: Նրանցից և ոչ ոք երկու կին չի պահում, իսկ շատ քիչ են նրանք, որ ավելի կին են պահում:

Ահա այսքան համառոտ գծերով Խուդիի մասին:

Արդյոք չկա միջոց, որ այս, ամեն ինչով հույները սովորեն հունարեն և այդ լեզվով արտահայտեն իրենց մտքերը, գաղափարներն ու խոհերը: Այո, նրանց միակ ցանկությունը հայերենը մոռանալը և որպես մայրենի լեզու հունարենը ձեռք բերելն է: Բայց մինչև օրս գործի դրած նրանց ջանքերն ապարդյուն մնացին:

Γ. ΠΑΣΧΑΛΙΔΗ, Η ΕΟΡΤΗ ΤΟΥ ΓΑΛΑΚΤΟΣ ΤΩΝ ΑΡΜΕΝΟΦΩΝΩΝ
ΕΛΛΗΝΩΝ ΤΗΣ ΒΙΘΥΝΙΑΣ, “ΛΑΟΓΡΑΦΙΑ”, ΔΕΛΤΙΟΝ
ΤΗΣ ΕΛΛΗΝΙΚΗΣ ΛΑΟΓΡΑΦΙΚΗΣ ΕΤΑΙΡΕΙΑΣ,
ΤΟΜΟΣ Ε, ΕΝ ΑΘΗΝΑΙΣ 1915-1916, σελ. 233-238

Գ. ՊԱՍԽԱԼԻԴԻՍ. ԲՅՈՒԹԱՆԻԱՅԻ ՀԱՅԱԽՈՍ ՀՈՒՅՆԵՐԻ ԿԱԹԻ ՏՈՆԸ:
«ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՀՈՒՆԱԿԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ, ՀԱՏՈՐ Ե,
ԱԹԵՆՔ, 1915-1916, ԷՁ 233-238

Ես ծագումով Խուդիից լինելով, Բյութանիայի այն շրջանից, որի հույն բնակիչները հայախոս են, իմ պարտքը համարեցի մի քանի տող գրել Բյութանիայի այս հայախոս հույների մասին, քանզի գիտեմ, որ հույների բացարձակ մեծամասնությունը գաղափար չունի ոչ միայն նրանց ծագման, այլև նրանց գոյության մասին:

Բյութանիայում, Կոստանդնուպոլսի դիմաց, Անատոլիայի երկաթգծի ասիական ասիին գտնվող Հայդար-փաշա կենտրոնական կայարանից 157 կմ, այսինքն՝ երկաթուղիով 5 ժամվա ճանապարհ հեռավորության վրա՝ Սանգարիոս գետի աջ ասիին, գտնվում է Կեյվե⁹ գյուղը, որի միջով հոսում է Սանգարիոսի բազուկ Գալլոս (թուրքերեն՝ Կարա-չայ) գետը: Գյուղը, որ նախկինում բավականին մեծ ավան էր, մոտ 150 տարի առաջ Սանգարիոս գետի հորդացման պատճառով ավերվեց և այժմ հազիվ հարյուր տուն բնակիչ ունի:

⁹ Մյուս հեղինակները գրում են Գեյվե (Հ. Բ.):

Կելվեն կայմակամի¹⁰ նստատեղին է և ենթարկվում է Նիկումեդիայի վարչութ-
յանը, որից հեռու է 90 կմ (երկու ժամ երկաթուղիով): Այստեղ ամեն հինգշաբ-
թի օր մեծ տոնավաճառ է լինում, որտեղ իրենց ապրանքներն են վաճառում
շրջաններից եկած հույն, հայ և թուրք բնակիչները:

Կելվեի շուրջ գտնվող ավաններից ամենանշանավորներն են Օրթաքյոյն ու
Խուղին, որոնք և միակն են, որ ներկայացնում են այս շրջանի հունական
բնակչությունը¹¹: Շրջանը եկեղեցական առումով ենթարկվում է Նիկիայի թե-
մին: Մրանցից Օրթաքյոյն ունի 6.000 հույն բնակիչ, իսկ Խուղին՝ 2.000, բոլորն
էլ հայախոս: Ելնելով նրանց լեզվից, որը մաքուր հայերենը չէ, այլ բովանդա-
կում է հունարեն և թուրքերեն բազում տարրեր, նրանց ծագման մասին բազ-
մաթիվ ենթադրություններ արվեցին: Ոմանք նրանց համարեցին հայեր,
նրանցից, որոնք Քաղկեդոնի՝ չորրորդ տիեզերական ժողովից հետո, երբ
մյուս հայերն անջատվեցին Կոստանդնուպոլսի պատրիարքարանից և ընդու-
նեցին միաբնակությունը, սրանք հավատարիմ մնացին պատրիարքարանին
և Ուղղափառությանը: Ուրիշները նրանց համարում են հետնորդները Մեծն
Աղեքսանդրի՝ Փոքր Ասիայում, Հայաստանի սահմաններին մոտիկ հաս-
տատված զինվորների, որոնք հայկական միջավայրի ազդեցության տակ ըն-
դունեցին հայոց լեզուն և Բյուրանիա տեղափոխվելով, այդ լեզուն էլ իրենց
հետ տարան: Բմ կարծիքով, այս երկու ավանների հայախոս բնակիչների մի
մասը տեղաբնիկներ են, որոնք վաղուց, դեռևս թուրքական նվաճումների ժա-
մանակ, մոռանալով մայրենի լեզուն, սովորեցին թուրքերենը, իսկ մյուսը եկ-
վոր է, ինչպես վկայում է ավանդությունը՝ Եփրատ գետին մոտիկ, Հայաստա-
նին սահմանամերձ Կապպադոկիայի հյուսիսարևելյան շրջաններից:
Մրանց գաղթը, ինչպես հնարավոր եղավ պարզել փաստին ավանդաբար հա-
սու ավելի տարեցներից, տեղի է ունեցել շուրջ երեք հարյուր տարի առաջ¹²:
Այս վերաբնակներն իրենց առաջին հայրենիքում լինելով հայկական միջա-
վայրում, ընդունեցին հայոց լեզուն, բերեցին այն իրենց նոր հայրենիքը և տա-
րածեցին իրենցից առաջ այստեղ ապրող բնակիչների մեջ: Այդ բանը հեշ-
տությամբ կատարվեց, քանզի այս երկու ավանների բնակիչները փոքրաթիվ
էին, հազիվ 40 ընտանիք, սպա և հայերի հետ համակեցություն ունենալու
պատճառով, հայերի, որոնք այս մասում թվով գերազանցում են հույներին:

Այս հայախոս հույների ազգային պատկանելության առնչությամբ պետք է
ասել, որ ոչինչ չկա, որ վկայեր նրանց Հայաստանից ծագելու մասին, ընդհա-
կառակը, գորավոր նկատառումներ համոզում են մեզ նրանց գտարյուն հույ-
ներ լինելուն:

1. Նրանց արտաքինը ամեննին էլ նման չէ հայկականին, որն աչքի է ընկ-
նում խոշոր քթով: Այդ պատճառով էլ յուրաքանչյուր օտարական դիտելով

¹⁰ Կազայի (շրջանի) ղեկավարը (Չ. Բ.):

¹¹ Բմա՝ հայ-հոռոմ հայախոս: Կարդա՝ հաջորդող նախադասությունը (Չ. Բ.):

¹² Բնչպես ցույց տվեցինք սկզբում՝ դա տեղի ունեցավ Աբագա փառայի գլխավորած
ջելալիների ապստամբության ժամանակ (1622-1628 թթ.), ուստի «ավանդաբար հասու
ծերունիների» հաշիվները միազամայն ճիշտ են (Չ. Բ.):

նրանց, հարյուրի մեջ հանգիստ կարող է տարբերել հային, հակառակ որ նա կրում է նույն հանդերձանքը և խոսում նույն լեզվով:

2. Նրանց բացարձակ հունական գիտակցությունը: Ի սկզբանե անտի նրանք ոչ միայն համակրանք չեն տաժում իրենց համագյուղացի հայերի նկատմամբ, այլ մեծ հակառակության մեջ են: Նրանք իրենց ամբողջ ուշքն ու սիրտը ուղղում են դեպի հունական իդեան և հունական կրթություն ստանալու համար ծախսում են առանց խնայելու, պահելով գերազանց դպրոցներ և գեղեցկամարմար հունական եկեղեցիներ: Այժմ բոլորն էլ կարող են հունարեն խոսել, որը վերջերս զգալի չափով տարածվեց թաղերում մանկապարտեզների հիմնադրմամբ, որտեղ երեխաներին մանուկ հասակից սովորեցնում են մայրենի լեզուն:

3. Նրանց մոտ չի գտնվել և ոչ մի գրավոր հուշարձան, որը վկայեր իրենց հայկական ծագման մասին: Երգրումի շուրջ բնակվող ուղղափառ հայերը, որոնց մասին խոսեցի սկզբում, ինչպես կարողացա իմանալ, հավատարիմ են մնում դեպի պատրիարքարանները¹³, բայց եկեղեցիներում և դպրոցներում գործածում հայոց լեզուն և իրենց մտքերը հայերեն են արտահայտում: Ընդհակառակը, Բյուրթանիայի հայախոսները եկեղեցում արարողության ժամանակ, ինչպես և դպրոցներում գործածում են հունարենը, գրում են հունարեն այբուբենով, և այն էլ ոչ միայն այժմ, այդ բանը տեղի էր ունենում ի սկզբանե անտի: Այդ պատճառով ահա, իմ բոլոր ջանքերը հայտնաբերելու հայերենով որևէ հուշարձան կամ որևէ ավանդություն, որ վկայեր թե հայերենն էր եկեղեցու լեզուն, մնացին ապարդյուն: Ես գտա հունարեն տառերով գրված երկու հարյուր և ավելի տարվա հնություն ունեցող փաստաթղթեր (լինեն դրանք համայնքին պատկանող կամ անհատ մարդկանց), ինչպես և նույնպես հունարեն գրված հնագույն եկեղեցական գրքեր: Սրանց կարելի է ավելացնել և բանավոր հուշարձանները, դրանք են՝ հանելուկները, առակները, աղոթքները, անեծքները, հմայությունները, որոնցից և ոչ մեկը հայերեն չէ, այլ բոլորն էլ թուրքերեն: Ես վերնում ասացի, թե նրանց մեջ նախքան հայերենը, տիրապետող էր թուրքերենը:

4. Հայախոս հույների տարբեր ծեսերը ոչ մի առնչություն չունեն, ոչ էլ նմանություն իրենց համագյուղացի և հարևան հայերի ծեսերի հետ: Այս հանգամանքը իրենց ազգային պատկանելությունը որոշելու համար ես ամենակարևորն եմ համարում, քանզի ժողովուրդների մեջ ամենախոր արմատները ծեսերն ունեն, որոնք ազգային մյուս հատկանիշների լեզվի և այլն կորստից հետո, էթնիկական ծագման մասին միակ վստահելի վկաներն են:

Օրթաքոյի և Խուղիի հույների¹⁴ մեջ տիրող ծեսերից պիտի աշխատեմ նկարագրել երկուսը, որոնք, թվում է, շատ կարևոր են, քանի որ, իմ կարծի-

¹³ Հավանաբար Գոստանդնուպոլսի և Անտիոքի (Չ. Բ.):

¹⁴ Բնա՝ «հայախոս հույների», այսինքն՝ հայ-հոռոմների (Չ. Բ.):

քով, առնչվում են Կիրելայի¹⁵ պաշտամունքի հետ: Այս երկու ծեսերը կատարվում են նույն օրը, որը կոչվում է «Կաթի տոն»:

Համբարձման տոնին, որն, ինչպես հայտնի է, գալիս է միշտ մայիս ամսին, այսինքն այն ժամանակ, երբ այդ տեղերում նոր է գարունը բացվում, միայն Օրթաքոյի և Խուդիի հույների շրջանում տարածված են հետաքրքիր սովորույթներ, որոնք տոնի կրոնական կողմի հետ ոչ մի առնչություն չունեն: Այդ օրը յուրաքանչյուր ընտանիք սովորություն ունի առավոտվանից պատրաստել կաթով և ձեռքի աղորիքով հաստ աղացած ցորենով մածուկ: Ընտանիքի բոլոր անդամները պարտավոր են այդ մածուկից ճաշակել: Եթե որևէ ընտանիք աղքատ է և ի վիճակի չէ մածուկի պատրաստման համար կաթ հայթայթել, պարտավոր է այն ձեռք բերել հարևաններից, որպեսզի անմասն չմնա և չխախտի հինավուրց սուրբ սովորույթը:

Ես տեղյակ չեմ, այս սովորույթը գոյություն ունի՞ արդյոք հունական աշխարհի այլ վայրերում, բայց հիշեցնում է հնում Աթենքում կատարվող Գալաքսիաները¹⁶, այսինքն այն տոնը, երբ աթենացիք Կիրելայի պատվին պատրաստում էին կաթից և աղացած գարուց պատրաստված մածուկ¹⁷:

Այն բանից հետո, երբ առավոտ կանուխ բոլորը ճաշակեն այս մածուկից, սկսվում է տոնի երկրորդ՝ ամենագլխավոր մասը:

Այս երկու ավանների ութ և ավելի տարեկան երեխաները, որոնք օրեր առաջ անհամբերությամբ սպասում են այդ օրվա գալստյանը և ամեն կերպ նախապատրաստվում են նոր հագուստներ և դրամ ձեռք բերելու, խմբեր կազմելով, երգելով գնում են մեկուկես ժամ հեռավորության վրա գտնվող Կյուբե (Կեյվե), որտեղ հիմնականում սրինգներ են գնում, որոնք տարբեր տեղերից հատուկ այդ օրվա համար դրանք պատրաստողները բերում են վաճառելու: Դրանք այսպես կոչված օրթավլոսներն¹⁸ են՝ տարբեր ձևի և մեծության: Բոլոր երեխաները, գնելով այդ սրինգները, նվազելով շրջում են Կեյվեի շուկայում՝ տեղացի թուրքերի, ինչպես և պետական ու զինվորական կառավարիչների ու պաշտոնեության զարմացական հայացքների տակ: Այդպես զվարճանալուց հետո, գալիս են Գալլոս գետի ափը և նրա ջրերում լողանում: Այնուհետև այս գետի ափին առատորեն աճող ուռենիների ճյուղերից ու շրջակա այգիների ծաղիկներից պսակներ շինելով, երգերով, սրինգի հնչյունների տակ վերադառնում են իրենց տները:

Պետք է նշել, որ սրինգների օգտագործումը այս երկու ավանների երեխաների կողմից շարունակվում է մոտ մեկ ամիս, որի ընթացքում փողոցներում ու ագարակներում, ամենուրեք հնչում են նրանց ձայները, որից հետո դեն են

¹⁵ Կիրելյան անվանումն է Մեծ Մայր աստվածության, որ պաշտվում էր հատկապես Փոյուգիայում՝ Փոքր Ասիայում: Համարվում էր հորինողը թմբուկների և ցիմբալների, որոնք ձայնակցում էին օրգաստիկ պարերը, որ իր պատվին էին կատարվում (Հ. Բ.):

¹⁶ Գալաքսիա – աստվածների Մորը նվիրված տոն Աթենքում (Հ. Բ.):

¹⁷ Տե՛ս Հեսեթիոսի Բառարանում, Գալաքսիա բառի տակ: Bekker, An. Gr. «Գալաքսիա», Աթենքում տոն ի պատիվ աստվածների մոր, որի ժամանակ եփում են գալաքսիան՝ զարիով ու կաթով պատրաստված մածուկ

¹⁸ Օրթավլոս – սրինգ, շվի, թերևս՝ դուրո՞ւկ (Հ. Բ.):

նետվում: Եվ այսպես վերջանում է այս տարօրինակ փառատոնը, որը, ինչպես ասացի, վերևում, կատարվում է Բյութանիայի միայն հայախոս հույների շրջանում, դրան չեն մասնակցում համագյուղացի թուրքերն ու հայերը:

Իմ կարծիքով այս սովորույթը, հնարավոր է, մնացորդն է Կյուբեում Կիրեւլայի պատվին Գալլոս գետի ափին կատարվող հին համաժողովրդական տոնի, որի ժամանակ շրջակայքի բնակիչները իջնելով մասնակցում էին դրան: Մենք գիտենք, որ Կիրեւլան պաշտվում էր գլխավորապես Փոքր Ասիայում, հատկապես Փոյուզիայում և Բյութանիայում, և որ գլխավոր երաժշտական գործիքը, որ օգտագործվում էր նրա պաշտամունքի ժամանակ սրինգն էր:

Այսքան համառոտ գծերով «Կաթի տոնի» ժամանակ Բյութանիայի հայախոս հույների և նրանց սովորույթների մասին: Սրանից բացի նրանց բազմաթիվ այլ սովորույթներն էլ ունեն գուտ հունական, որ համընկնում է ընդհանրապես հույների սովորույթներին: Ես ինձ երջանիկ պիտի զգայի, եթե կարողանայի ապագայում զբաղվել նրանցով, լույս սփռելու համար Փոքր Ասիայի հույների այս մասի վրա, որը հունական այսքան շրջանների ազատագրումից հետո¹⁹ միակը լինելով օտարի լծի տակ, պետք է գրավի բոլոր նրանց ուշադրությունը, ովքեր կարող են ուսումնասիրել նրա ազգագրական հուշարձանները:

Γ. Ι. ΑΝΑΣΤΑΣΙΑΔΟΥ, ΧΑΪ + ΧΟΥΡΟΥΜ (ΑΡΜΕΝΟΓΛΩΣΣΟΙ ΕΛΛΗΝΕΣ), ΜΙΚΡΑΣΙΑΤΙΚΑ ΧΡΟΝΙΚΑ. ΣΥΓΓΡΑΜΜΑ ΠΕΡΙΟΔΙΚΟΝ ΕΚΔΙΔΟΜΕΝΟΝ ΥΠΟ ΤΟΥ ΤΜΗΜΑΤΟΣ ΜΙΚΡΑΣΙΑΤΙΚΩΝ ΜΕΛΕΤΩΝ ΤΗΣ ΕΝΩΣΕΩΣ ΣΜΥΡΝΑΙΩΝ, ΤΟΜΟΣ ΤΕΤΑΡΤΟΣ, ΑΘΗΝΑΙ 1948, σελ. 37-46.

Գ. Ի. ԱՆԱՍՏԱՍԻԱՐԻՍ. ՀԱՅ-ՀՈՌՈՄՆԵՐ (ՀԱՅԱԽՈՍ ՀՈՒՅՆԵՐ), ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ, ՉՄՅՈՒՌՆԻԱՅԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ, ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ, ԱԹԵՆՔ, 1948, էջ 37-46

1924 թվականին Փոքր Ասիայի այլ հույների հետ, որոնց Լոզանի դաշնագիրը դատապարտել էր «փոխանակության»²⁰, Հունաստան հասան և Եփրատի Էզինի շրջանից²¹ յոթանասուն ընտանիք և հաստատվեցին հյուսիսային Էվբիայի «Կաստանիտիսա» կոչվող ագարակում, որտեղ կյանքի կոչեցին Նոր Էզինը: Երկու տարի անց Ռուսաստանից²² եկան նույն շրջանի բնակիչներ հանդիսացող ևս հիսուն ընտանիք և հաստատվեցին Սալոնիկի մոտակայքում գտնվող Դիավատա վայրում:

¹⁹ Նկատի ունի 1918 թ. հունական բանակի կողմից փոքրասիական մի շարք շրջանների գրավումը (Հ. Բ.):

²⁰ Նկատի ունի Փոքր Ասիայի և Արևելյան Թրակիայի հույն բնակչության «փոխանակությունը» Հունաստանի թուրք բնակչության հետ (Հ. Բ.):

²¹ Εβδομά, περίοδο Β' έτος Η', τόμο Η', Αθήναι 1891, φ. 45. Տե՛ս այս հոդվածի մեր հայերեն թարգմանությունը վերևում (Հ. Բ.):

²² Իմա՛ Մովեսական Միությունից (Հ. Բ.):

Այս, ընդհանուր հաշվով, 120 ընտանիքները ներկայացնում են այսպես կոչված հայ-հոռոմներին, այսինքն հայ-հելլեններին, որոնք և պետք է մեզ գրադեցնեն այստեղ շնորհիվ պատեհության, որ մեզ ներկայացավ մի օր ի դեմս մի բարեհամբույր մարդու, ցինկոգրաֆ Դիմիտրիոս Պապադոպուլոսի: Իր մի հուզիչ գրությամբ նա մեզ հայտնում էր, թե պատկանում է հայ-հոռոմների ընտանիքին²³ և ընդգծում. «Փոքրասիական տարեգրքի» մեծարգո անդամների պատրաստակամությունը, ինչպես և նրա ամենապատվելի նախագահի հեղինակությունն ու հայրենասիրությունը, ինձ վստահեցնում են, որ պիտի կատարվի վայրի և նրա բնակիչների պատմության կատարյալ հետազոտությունը, մի բան, որ հոգու պարտքն էմ համարում իմ արգո հոր սուրբ հիշատակին, որ հոգաց ինձ սովորեցնել այն չնչին գրագիտությունը, որին հասու եմ»:

Նախ և առաջ ովքե՞ր են հայ-հոռոմները և ո՞րտեղից են ծագում: Կարծում եմ, որ ոչ ոք չի կարող գիտական հաստատակամությամբ պատասխանել այդ հարցին, քանզի պակասում են արժանահավատ գրավոր աղբյուրներ: Գոնե ինձ չհաջողվեց այդպիսիք գտնել և երջանիկ պիտի զգամ, եթե ներկա, ոչ մեծ հավակնություն ունեցող տողերով, առիթ տրվի մեզ հետաքրքրող հարցի ավելի լիակատար ուսումնասիրությունը: Ըստ Նիկիֆորոս Մոսիսպուլոսի²⁴, հայոց նախահայրը, համաձայն ավելի վիպական տեղեկությունների, եղել է Հայկը, որ սերում էր Հապետոսից (Հաբեթի հունականացած ձևը): Հայկի կերպարն ստեղծվեց մ. թ. ա. 24-րդ դարում, հայերեն «հայ» բառից, որ առաջնորդ է նշանակում: Համաձայն Մոսիսպուլոսի՝ «հոռոմայեցին»²⁵ հայերեն կոչվում է հոռոմ, որի համար էլ ահա հայախոսներին կոչում են հայ-հոռոմ:

Պետք է նշել, որ հայ-հոռոմներ կային և Բյուզանդիայում: Տարիներ առաջ այստեղ հաստատված և այնտեղից սերող հանգուցյալ Գեորգիոս Պասխալիդիսը, նրանց մասին մի քանի տեղեկություններ էր տպագրել հանգուցյալ Դամվերգիսի «Հերդոմաս»-ում: Ըստ ավանդության, գրում է Պասխալիդիսը, Խուղի, Օրթաքոյ և Ֆունդուկլի գյուղերի առաջին վերաբնակիչները 250 տարի առաջ այստեղ էին եկել Եփրատի Էզինից: Թեև նման վերաբնակեցման պատճառներն անհայտ են, այն, որ խնդրո առարկա վերաբնակներն այդտեղից էին ծագում, կասկածի ենթակա չէ, քանզի Եփրատի Էզինի շրջանում էլ կա Խուղի անունով գյուղ, իսկ Օրթաքոյը մինչև վերջերս ավելի տարեց մարդիկ կոչում էին Ալ-պերակ (իմ ա՛ Աղբերակ – Հ. Բ.), որպիսին նույնպես գտնվում է Եփրատի Էզինի շրջանում:

²³ Ուստի «Պապադոպուլոս» է դարձել նրա իսկական Տերտերյան ազգանունը (Հ. Բ.):

²⁴ Ν. Μοσχόπουλο, Ἡ Ἀρμενία καὶ τὸ Ἀρμενικόν ζήτημα, Ἀθήναι (Ն. Մ ո ս ի ս պ ու լ ո ս. Հայաստանը և Հայկական հարցը, Աթենք, 1928): Ն. Մոսիսպուլոս – Լրագրող (1871-1964) և պատմաբան: Ծնվել է Կոստանդնուպոլսում: 1893-ին հրատարակում էր Կոստանդնուպոլսի «Նեոլոգոս» պարբերաթերթը, 1905-ին աշխատում «Ավստրիական գործակալությունում»: Հորվաճագիրն էր «La Turquie» և ֆրանսալեզու այլ թերթերի: 1922 թ. գաղթեց Հունաստան, աշխատանքի ընդունվեց Արտաքին գործոց նախարարության մամուլի բաժնում, իսկ 1931-ից Թուրքիայի պատմություն էր դասավանդում Քաղաքական գիտությունների դպրոցում (Հ. Բ.)

²⁵ Միջնադարում «հոռոմայեցի» նշանակում էր հույն (բյուզանդացի): «Հելլեն»-ը որպես էթնիկական հասկացություն վերացել էր, այն նշանակում էր հեթանոս (Հ. Բ.):

Երեք վերոհիշյալ գյուղերի վերաբնակիչների այնտեղից ծագելու մասին ապացույց կարող է հանդիսանալ և այն, որ սուրբ Գևորգի մի սրբազան աղբյուր կոչվում էր «Ակ», որ հայերեն աղբյուր է նշանակում: Այդ բառից էլ ահա, վերջում «ն» հոդի հավելումով, առաջացավ Ակն քաղաքի անվանումը, որը թուրքերը, իրենց համար սովորական աղավաղմամբ, դարձրին Էզին: Այս տեղանվան առաջացման պատճառը մենք կտեսնենք ստորև:

Հայ-հռոմների ծագման մասին արտահայտված է երեք կարծիք.

առաջին. որ նրանք հայեր են, որոնք Լուսավորչական եկեղեցու Արևելյան Ուղղափառ եկեղեցուց բաժանվելուց հետո չհետևեցին իրենց ազգակիցների մեծամասնության, հավատարիմ մնացին Ուղղափառության (իմա՝ քաղկեդոնականության – Ն. Բ.) և ղեկավարվում էին հույն հոգևորականների կողմից՝ ճանաչելով Կոստանդնուպոլսի պատրիարքարանը, որով, ժամանակի ընթացքում կատարելապես մոռացան իրենց ծագումը և իրենց հույն համարեցին: Այս երևույթը, որ սովորական բան է պատմության մեջ, հանդիպում է, օրինակի համար, և Կրետեում, որտեղ մահմեդականացած հույները ամենամոլեռանդ թուրքերը դարձան²⁶:

Երկրորդ. հույներ են, Քսենոփոնի տասը հազար զինվորներից սերած, որոնց հետագայում ավելացան և Մեծն Աղեքսանդրի զինվորներ, որոնք հայուհիների հետ ամուսնացան և վերջնականապես հաստատվեցին հիշյալ վայրերում՝ ի վերջո կորցնելով իրենց մայրենի լեզուն:

Երրորդ. նրանք Հունաստանի Էզինա կղզուց վերաբնակներ են, այստեղից էլ Էզին անունը:

Այս վերջին կարծիքը, հարկավ, ուշադրության արժանի չէ, այն հիշեցնում է «ավանակ» բառի ստուգաբանությունը, որ իբր ծագում է դրանից, որ նրան միշտ ծեծում են, բրիգոլայինը՝ որ իբր առաջացել է կրակի վրա տապակվելուց²⁷, ինչպես և նման «լրջության» մի փորձ, երբ գերագույն պոետին ներկայացնում են որպես Օմեր, որին հույները դարձրել են ... Հոմերոս:

Երկրորդ²⁸ կարծիքի մեջ գուցե կան ճշմարտության տարրեր: Պ. Կարոլի-դիսը Պապառիզոպոլոսի «Հույն ժողովրդի պատմության» կցած իր ծանոթագրություններից մեկում²⁹ գրում է. «Հերձվածների առկայությանն Ասորիքում, Միջագետքում, Հայաստանում և Խաղտիքում նպաստում էր այն իրողությունը, որ կրոնական բաժանումը (քաղկեդոնիկ եկեղեցուց – Ն. Բ.) այս երկրներում կապված էր ազգային հակազդեցության հետ ընդդեմ հելլենակա-

²⁶ Երբ մի անգամ Զմյուռնիայում Աթենքի համալսարանի շրջանավարտ մի երևելի կրտսցի թուրքի հետ իմ խոսակցության ժամանակ կարծիք հայտնեցի, որ Կրետեի թուրքերը իսլամացած հույներ էին, նա զայրացավ, և ես շատ ջանքեր թափեցի մինչև նրա բարկությունն իջեցնել: Իմ խոսակիցը, որ խելացի ու շատ զարգացած մարդ էր, իրեն անպատվված զգաց, քանզի ես բացասում էի նրա գուտ թուրքական ծագումը:

²⁷ Հունարեն ավանակ (γάδαρος – դայդարոս) բառը բխեցնում են համահնչուն áει δέρειν – ից (աի դերին), որ «միշտ ծեծել» է նշանակում, իսկ բրիգոլան (նշանակում է թակած կոտլետ) քարի; քարի ζείν – ից (պիրի գեին), կրակով տապակել (Հ. Բ.):

²⁸ Հեղինակը, ինչպես երևում է, կողմնակից է առաջին կարծիքին: Մի քիչ հետո էլ նա սխալմամբ գրում է երկրորդ կարծիքի մասին (Հ. Բ.):

²⁹ Έκδοσι 'Ελευθερουδάκη, τόμο Γ', μέρο Α' 253.

նության և ըստ էության արդյունքն էր նման հակազդեցության: Հերձվածող եկեղեցիները (իմա՝ միաբնակ – Ն. Բ.) այս երկրների ժողովուրդների համար էին (ինչպես մինչև օրս էլ են), ազգային եկեղեցիներ (national-ի իմաստով), ունեն սեփական դեմք: Նման հակազդեցության ու բաժանման հիման վրա Ուղղափառ եկեղեցին ստացավ մաքուր ազգային բնույթ և հիշյալ երկրներում (բացառյալ Հայաստանից) ուղղափառ մնացածները հերձվածողների կողմից ստացան Մելքիստներ անունը, այսինքն՝ Կոստանդնուպոլսի կայսեր պատկանող, ասել է՝ հույներ: Քանզի հիշյալ երկրներում ուղղափառ մնացին միայն հունական ծագում ունեցողները, իսկ ոչ հույները դարձան հերձվածող: Դրա համար ահա Ասորիքի, Պաղեստինի և Միջագետքի, Եգիպտոսի, Հայաստանի ուղղափառները հույներ էին և մինչև օրս էլ հույներ են»:

Այդպես է գրում Պ. Կարոլիդիսը: Իմ համեստ կարծիքով՝ ուշագրավ քննական ոգով է ուսումնասիրում հարցը պատրիարք Կոստանդինոս Ա-ը³⁰: Նա գրում է. «628 թ. պարսիկների դեմ հաղթանակով վերադարձող Հերակլիոս կայսրը, լինելով Թեոդոսուպոլսում, այստեղ հրավիրեց Եզր կաթողիկոսին, որը բազում եպիսկոպոսներով գնալով այնտեղ, առաջինը հաշտության օրինակ հանդիսացավ: Նա խնդրեց չորրորդ (իմա՝ Քաղկեդոնի – Ն. Բ.) տիեզերական ժողովի որոշումների պաշտոնական բնագիրը և այն ճշմարիտ համարելով հրաժարվեց կաթողիկոս Ներսես Բ (Բագրևանդոս – Ն. Բ.) անցյալում ընդունած նորամուծություններից և կրքի ազդեցության տակ դիմած անխոհեմ քայլերից (Քաղկեդոնի ժողովի) ճշմարիտ դավանանքը բարեպաշտորեն ընդունելով, համաձայնվեց այդ Տիեզերական ժողովի որոշումներին: Այդ թվականից սկսյալ Բյուզանդական կայսրության սահմաններում բնակվող բազմահազար հայեր ընդունեցին Ուղղափառ եկեղեցու ծիսակատարությունները, սովորույթները, տոներն ու պահքերը... Այս ուղղափառ հայերի մնացորդները մինչև օրս գոյություն ունեն Անատոլիայում, Մեքաստիայի (Մվազի) կայմականությունում՝ թվով տասներկուսից ավելի գյուղեր, որոնց գյուղաքաղաքը կոչվում է Էզին: Այս գյուղերը գտնվում են (Էզինից) արևմուտք, Եփրատից ոչ հեռու: Այս ուղղափառները հայտնի են որպես հայ-հոռոմներ, եկեղեցական առումով դեկավարվում են Թեոդոսուպոլսի մետրոպոլիտի կողմից, որն, իր հերթին, ենթարկվում է Անտիոքի պատրիարքական աթոռին»³¹:

Ինչպես ասացինք, երկրորդ³² կարծիքի մեջ կա ճշմարտության բաժին: Հանգուցյալ Պասխալիդիսը նույնպես կարծում էր, որ հայ-հոռոմները հույներ էին, որոնք չցանկանալով մահմեդականություն ընդունել, դիմեցին այդ երկրի հայերին, որոնք այն ժամանակ թուրքերի մոտ մեծ կշիռ ունեին, որով բռնի իսլամն ընդունելուց զերծ մնացին, բայց ժամանակի ընթացքում լեզվի առումով ձուլվեցին հայերի հետ: Բայց Պասխալիդիսը ինձ տված իր մի գրության մեջ նշում է ավելի ճիշտ. «Ինչպես երևում է, առաջին անգամ հրապարակ ե-

³⁰ Կոստանդնուպոլսի պատրիարք (1830-1834), վախճանվել է 1859-ին (Ն. Բ.):

³¹ Κωνσταντίνου Α' τοῦ ἀπὸ Σιναίου ἀοιδίμου Πατριάρχου Κωνσταντινουπόλεως τοῦ Βυζαντίου Βιογραφία καὶ συγγραφαὶ ἐλάσσοι, ὑπὸ Θεοδώρου Μ. Ἀριστοκλέου τοῦ ἐκ Χάλκης, ἐν Κωνσταντινουπόλει 1866, σελ. 87-88.

³² Տե՛ս նաև 8:

կած հայախոս հույները որպես կենտրոն ունեին Սերաստիայի Էզին գյուղը: Նրանք համարվում են Փոստ պատրիարքի ժամանակ հույների և հայերի միջև եկեղեցական բաժանման վերացման շարժման մնացորդները: Միաբնակ հայերը չընդունեցին Քաղկեդոնի Չորրորդ ժողովի որոշումները, բայց հայ-հոռոմները Քաղկեդոնի ժողովի կանոններն ընդունեցին և ենթարկվեցին Մեծ Անտիոքի պատրիարքական աթոռի Ամիդի մետրոպոլիտին»:

Այսպիսով, ավելի տրամաբանական է և գիտական ընդունել առաջին վարկածը, այն է՝ հայ-հոռոմների հայկական ծագումը, մի բան, որ չի բավարարում Պապադոպոլոսին և նրա հայրենակիցներին, որոնք հաստատ հավատացած են, որ սերում են Քսենոփոնի տասը հազար զինվորներից: Տեսնում էք, մարդիկս ի բնե հակված են ռոմանտիզմին, որտեղից և ամեն ինչ հունականացնելու մոլուցքը: Մի թե մենք չէինք, որ Նապոլեոն Մեծի նախնիներ համարեցինք Կալիմերիսներին, իսկ Կուբայի տխրահռչակ դիկտատոր Բատիստային հայտարարեցինք, թե հունական ծագում ունի: Ահա թե ինչ է գրում Պապադոպոլոսը վերևում հիշված իր գրության մեջ. «Հայրս, երբ ես տասը տարեկան էի, ինձ ուղարկեց Կոստանդնուպոլիս, որտեղ ապրում էի քիչ հունարեն, բայց բավականաչափ թուրքերեն և հայերեն իմացող հորեղբորս տանը: Նա ունևոր էր, բայց որովհետև սկսեց ռևոլյուցիոն տառապել, 1903 թ. գնաց Էդիպսոսի ջերմուկները³³: Երբ վերադարձավ ջերմուկներից, առաջին խոսքերը, որ ասաց, հետևյալներն էին. «Դիմիտր, Էդիպսոսում ես իմացա, թե ովքեր ենք մենք: Այնտեղ մի հյուրանոցում ես ծանոթացա մի գեներալի հետ և պատմեցի մեր հայրենիքի մասին: Նա ասաց ինձ. «Դուք հին հույներ եք, այն զինվորներից, որ Մեծն Աղեքսանդրը թողեց ճանապարհները հսկելու»: Եվ Պապադոպոլոսը շատ միամիտ ավելացնում է. «Այսպիսով բավարարված էինք՝ հորեղբայր ու եղբորորդի և այդ բանը տարածում էինք մեր հայրենակիցների մեջ: Իսկ երբ 4-5 տարի անց հին հունարեն բավականաչափ սովորեցի և կարդացի Նահանջ բյուրոցի այն տեղը, որտեղ Քսենոփոնը նկարագրում է բարձրաբերձ ժայռերի վրա կանգնած մարդկանց, որոնք հսկայական քարեր էին շարտում խանգարելու համար Բյուրին անցնելու միակ անցումներից, պատկերացրի իմ հայրենի լեռներն ու ժայռերը և իմ հորեղբորը բացատրեցի հարցին առնչվող Քսենոփոնի հատվածը, և նա շատ գոհ մնաց»:

Հասկանալի է, հայ-հոռոմների ծագման մասին հետագա հետազոտությունը գիտական հետաքրքրությունների թեմա է, սակայն գործնական առումով այն միանգամայն աննպատակ է: Ինչպիսի ծագում էլ ունեցած լինեն, նրանք մարդիկ են հունական գիտակցությամբ, ամենամաքուր ազգային զգացումներով և կարիք չունեն փաստաթղթերով ապացուցելու իրենց հունականությունը, որը տարփողում է նրանց ջերմ ազգային գիտակցությունը, միակը, որ արժե հաշվի առնել: Մի քանի տարի առաջ անվանի ֆրանսիացի փիլիսոփա Ժան Ֆիլոն ապացուցեց՝ ինչքան մոլորություններ կան ժողովուրդների ծագման մասին առաջ քաշված տեսությունների մեջ:

³³ Գտնվում են Հունաստանում (Հ. Բ.):

Ընդամենը վեցն էին հայ-հոռոմների գյուղերը. Վանք, Ջորակ³⁴, Մուսագա, Միրգու, Հողուս և Մամսա: Նրանցից առաջինները ենթարկվում էին Էգինի կայսականության, Հողուսը Կամախի կայսականության, իսկ Մամսան Քրդի-սատանի ՉԱշկաձագի կայսականության: Այս վերջինիս բնակիչները հաստատվեցին Կիլիկիսի³⁵ շրջանի Ջախարատու թաղում: Հողուսը մնացած չորսից բավականին հեռու էր, ռուս-թուրքական սահմանին մոտիկ և երբ, 1914 թ. համաշխարհային պատերազմի ժամանակ ռուսներն առաջ շարժվելով հասան մինչև Երզնկա և Էրզրում, Հողուսի բնակիչները նրանց մեծ ռզնորությամբ դիմավորեցին: Դրա համար ռուսական բանակի նահանջի ժամանակ հետևեցին նրան մինչև Ռուսաստան, ուր և մնացին մինչև որ Բնակչությունների փոխանակության կոմիտեն նրանց Հունաստան ուղարկեց, որտեղ որ նրանք հաստատվեցին, ինչպես սկզբում ասացինք, Սալոնիկի Դիավատա վայրում (նախկինում Դուրուլար):

Վանք գյուղը գտնվում էր Էգին քաղաքի դիմաց, Եփրատի ձախ ափին: Վանքի թիկունքում վեր է խոյանում մի հսկա ժայռ, մի տեսակ անառիկ բերդ, որի բարձրությունը վայրը այցելած գերմանացի զորավար Մոլտկեն³⁶ հաշվեց 1400 մետր: Տեղանքը արտակարգ գեղեցիկ է, մի բան, որ արդարացնում է Մոլտկեի գրածը, թե հասել է իր կյանքում տեսած ամենագեղեցիկ վայրը:

Ժայռն անմատչելի է, իսկ նրա վրա, համաձայն տեղական ավանդության, գտնվում էին հին հույները, որոնք վեր էին բարձրանում մի կածանից, որ ոլորապտույտ փորել էին ժայռի կողերին: Մուրք Գևորգի տոնին այնտեղ էին բարձրանում մերձակա չորս գյուղերի բնակիչները՝ իրենց շուրջառները հագած քահանաների հետ և զվարճանում: Բայց քանի որ ժամանակի ընթացքում փորված կածանը մաշվել էր, առջևից ընթանում էր մի առաջնորդող, ամուր մի պարան կապում, որի օգնությամբ տոնախմբության մասնակիցները ապահով կերպով վեր էին բարձրանում: Գազաթին մինչև վերջերս կային ավերակ դարձած տների և վաղ բյուզանդական եկեղեցու հիմքեր:

Այնտեղ ծառերը, ծաղիկները և տունկերը արտակարգ են աճում: Առանց չափազանցության հանդիպում են արտիճուկի մեծության վարդակակաչներ և կակաչներ³⁷: Ահա այս ավերակ դարձած տներում ապրեցին, ըստ ավանդության, Մեծն Աղեքսանդրի բանակի ավելի ծեր և հիվանդ զինվորները և չէին հեռանում այդ ժայռից, այլ միայն երբ իջնում էին որս անելու: Այն ժամանակաշրջանում, երբ հայերը Պարսկաստանից և Արարատից տարածվում էին Փոքր Ասիայում, նրանցից մի խումբ գնում է Եփրատի հունն ի վեր,

³⁴ Հունաստանի Էլբրա կղզում հաստատված հայ-հոռոմները մինչև օրս էլ այդ գյուղը կոչում են Ջուրակ և բացատրում ջրի ակ (Հ. Բ.):

³⁵ Քաղաք Սալոնիկի նահանգում (Հ. Բ.):

³⁶ Helmuth von Moltke (1800-1891) – պրուսական գլխավոր շտաբի պետ: 1835 թ. ուղարկվեց Թուրքիա, որպես սուլթան Մահմուդ II-ի զինվորական խորհրդական: Արևմտյան Հայաստան եկավ 1838 թ.: 1839 թ. վերադարձավ Գերմանիա, ուր հրատարակեց իր նամակների ժողովածուն՝ «Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei» – 1841 (Հ. Բ.):

³⁷ Խոսքը քնարեր կակաչի մասին է, որից օպիում են ստանում, իսկ սերմերից ձեռք հանում:

փնտրելով նրա ակունքները. համբավ էր տարածվել, թե այնտեղ կան շատ բերրի հողեր: Այն պատճառով, որ նրանք ասում էին, թե գնում են «դեպի ակը», նրանց կողմից կառուցված քաղաքն էլ կոչվեց Ակն (ակ հայերեն նշանակում է աղբյուր): Մի թե այդ նույն եղանակով չի բացատրվում և թուրքերի կողմից Կոստանդնուպոսլին տրված անունը: Ասում են, թե նրանք անվերջ լսելով «իս տին պոլին» (նշանակում է՝ «ի քաղաք» – Ն. Բ.), սարքեցին Իստամբուլը:

Երբ գաղթական հայերը Եփրատի հոսանքն ի վեր գնալով հասան անառիկ բլրի դիմացի վայրը, կարծեցին, թե արդեն հասել են գետի ակունքը, և զմայլված տեղի արտակարգ գեղեցկությամբ, հիմնադրեցին Էզին քաղաքը: Բայց նրանք սխալված էին կարծելով, թե հասել են գետի ակունքը: Նրանց սխալի պատճառը հետևյալն էր. վերևում մեր հիշած ժայռը իրենից ներկայացնում է մի ժայռոտ շրջանակաձև լեռնաշղթայի ամենաբարձր կետը: Այդ լեռնաշղթան երկու տեղում Եփրատի ջրերից հանկարծ կտրվում է, գետը մուտք գործելով մի տեղից, դուրս է գալիս մյուսից՝ շարունակելով իր ընթացքը դեպի պարսից ծոց: Ժայռերի թողած անցքի նեղության պատճառով գետը այս կետում շատ հորդառատ է լինում: Որով, երբ հայերը հասան այնտեղ և տեսան, թե ինչպես են ժայռից դուրս ժայթքում գետի արագահոս ջրերը, կարծեցին, թե հասել են ակը և այնտեղ կառուցեցին իրենց բնակատեղին:

Ժամանակի ընթացքում եկան և տվյալ շրջանում հաստատվեցին և այլ գաղթականներ: Նրանք, ստեղծելով մի կուռ ամբողջություն, Բյուզանդական կայսրությանը բազում անհանգստություններ պատճառեցին: Ի վերջո հաշտություն կնքվեց, և նրանց այնտեղ մնալն օրինականացվեց պայմանագրով, որն, ինչպես ասում են, մի գյուղում, որը մինչև վերջերս կոչվում էր Կամարկապ, որ հայերեն նշանակում է դաշնադրություն:

Այդ ամբողջ ժամանակաշրջանում այսօրվա հայ-հոռոմների նախնիները շարունակում էին ապրել իրենց անանցանելի ժայռի վրա, բայց այդ ընթացքում բազմանալով, ձեռք էին բերել և մշակելի հողեր դաշտում: Եվ այդպես, դեպքերը տեղի էին ունենում, իսկ պատմությունը շարունակում էր իր ընթացքը: Ըստ մի ավանդության, շուրջ 500 տարի առաջ այնտեղից էր անցնում սուլթան Մուրադ Ա-ը³⁸, որ տեսնելով այդ բնական բերդը, նրա բնակիչների մասին տեղեկություններ պահանջեց: Երբ իմացավ, որ նրանք այնտեղ էին մնում ավազակների վախից դրդված, խիստ հրամաններ տվեց՝ ոչնչացնել ավազակներին, իսկ ջինիվիզ³⁹ բնակիչներին ցած իջնել: Այսպիսով նրանք ստիպված էին լքել իրենց ապաստարանը և գետի ափին գյուղ կառուցել: Այնպես պատահեց, որ այն ժամանակ Եփրատը հորդացավ, իսկ ցած իջնողները մի ժայռի վրա գտան հաստ փայտից պատրաստված երկաթապատ մի դուռ, որի վերևի մասում խաչ էր փորագրված: Ըստ երևույթին եկեղեցու դուռ էր, որ ջրերն էին բերել: Բոլոր դեպքերում բնակիչներն այդ բանը բարի նշան համա-

³⁸ Մուրադ I, մականունը՝ Ղազի, թուրք սուլթան (1362-1389 թթ.): Նրա իշխանության ժամանակաշրջանում սկիզբ առաջ մանկահավաքը (դեշիրմեն) (Ն. Բ.):

³⁹ Թուրքերը «ջինիվիզ» են կոչում բյուզանդացիներին:

րեցին, Աստծո մի տեսակ ցուցում, դրա համար առանց ժամավաճառ լինելու հիմքերը զցեցին նոր բնակատեղիի՝ Վանք գյուղի եկեղեցու, այն ժայռի վրա, որտեղ գտնվեց դուռը, իսկ ժայռը կոչեցին «Քար բինան», այսինքն՝ «քար-պնակ»⁴⁰, որովհետև իսկապես նման է մի հսկայական պնակի, որի կեսը կարծես խրված է հողի մեջ, իսկ մյուս կեսը ցցված է գետի վրա, որի պատճառով այնտեղ ստեղծվում է մի հզոր ջրապտույտ, որը քշում տանում է դեպի ժայռը ինչ ջրի հոսանքը բերում է, ինչպես այդ դուռը, որը տեղադրվեց սբ. Գևորգ անունը կրող նոր եկեղեցու կանանց կանգնելու տեղը:

Այս քարե պնակը, որի վրա կառուցվեց եկեղեցին, ունի 200 մետր բարձրություն, բնակիչները նրա վրա հող փոխադրեցին և սուսիներ սնկեցին: Եկեղեցու բակում կա մշտահոս աղբյուր, որը ջրում է սուսիները, որոնց արմատները հասան մինչև գետը, այդ իսկ պատճառով ծառերը հսկայական մեծություն ունեն, որոնցից մի մասը համարվում է 400 և ավելի տարեկան:

Բոլոր անցած դարերի ընթացքում հայ-հոռոմները անսասան պահպանեցին հավատքը դեպի իրենց հունականությունը, թեև հունարեն մեկ բառ անգամ չգիտեին, քանզի իրենց մայրենի լեզուն նախ և առաջ հայերենն էր, ապա թուրքերենը: Հայերենը դայրոցում էին սովորում:

Եկեղեցական արարողությունները հոգևոր երգերի մի խառնուրդ էր՝ թուրքերեն, մեծ մասը հայերեն և փոքրաթիվ հունարեն: Բայց եկեղեցի հաճախողները հունարեն չէին հասկանում: Այդուհանդերձ գիտենք, և դա պետք է շեշտվի, որ հայերեն երգվող հոգևոր երգերը բացարձակապես կապ չունենին հայոց եկեղեցու արարողության հետ, այլ մեր եկեղեցու արարողության թարգմանությունն էին և երգվում էին մեր եկեղեցական երաժշտության եղանակով: Ի դեպ՝ 1896 թ. հայերենը կատարելապես վերացվեց և նրան փոխարինելու եկավ կարամաներենը⁴¹:

Մնում է հատուկ մի քանի խոսք ավելացնել այն հայ-հոռոմների եղեռնական ճակատագրի մասին, որոնք, ինչպես սկզբում ասացինք, հաստատվել էին Բյութանիայում: Բժիշկ Վենեդիկտոս Ադամանտիադիսը Համագաղթականական առաջին համագումարում (1923 թ.) իր մի արժեքավոր հաղորդման ժամանակ նրանց մասին ասաց հետևյալը.

«Գեյվե-Օրթաքյոյի շրջանի (որի մեջ էին մտնում Գեյվե, Օրթաքյոյ, Բուրխանիե, Սասլի, Խուղի, Քյուպի գյուղերը) հունական ողջ բնակչությունը, 15 հազար հոգի, որը ծաղկում էր առևտրում, արդյունաբերության մեջ և շատ հարուստ էր, 1920 թ. վերջին կուտակվելով և փակվելով Մանգարիոս գետի Կարա-սու գետակի մոտի քարավանատներում, մեկ օրում կոտորվեց մոլեռանդ ու արյունարբու քեմալականների կողմից: Նրանց մնացորդները որսորդական շներով հալածական եղանակով լեռներում, կարծես որսի կենդանիներ լինեին: Նրանք խայտառակվելով, խոշտանգվելով, բռնաբարվելով մեկ առ մեկ կոտորվեցին տանջալից մահով: 1920 թ. օգոստոսի վերջին այդ շրջանում չէր

⁴⁰ Հեղինակը հունարեն տառերով գրում է «Κάρο-μπίνα»: Վերջին «ն» (ն) պարզապես սխալ է, պիտի լինի «κ» (կ), իսկ «պ»-ի «բ» արտասանությունը պարզապես արևմտահայրեն է (Հ. Բ.):

⁴¹ «Կարամաներեն» ասելով նկատի ունի հունատառ թուրքերենը (Հ. Բ.):

մնացել և ոչ մի հույն: Վերապրեցին մի քանի հարյուր հոգի միայն, ովքեր Աստծո նախախնամությամբ նախքան թուրքերի հարձակումը թողել էին իրենց հայրենիքը»:

Հայ-հոռոմները տվել են հայտնի մարդիկ՝ բժիշկներ, ուսուցիչներ, գրողներ և այլն: Հիշատակում ենք Խրիստոս Պապադոպուլոսին⁴², Մարկոս Կլեոպոլուսին, Ապոլլոնին ձոնված հիմնի կոմպոզիտոր և ժողովրդական երգերի հավաքող Գեորգիոս Պախտիկոսին⁴³, Մ. Մոխիադիսին⁴⁴, Գ. Պասխալիդիսին⁴⁵, Մամոսի կուսակալ Կոստ. Վայաննիսին⁴⁶: Կերկիրայի նախկին մետրոպոլիտ Ալեքսադրոսը և Կոզանիի մետրոպոլիտ Հովակիմը հայ-հոռոմներից են ծագում: Երկրորդը հատկապես մտադիր է մեզ հետաքրքրող հարցով ավելի հանգամանորեն զբաղվել, և այդ բանը նա պիտի կատարի, հենց որ հանդարտվեն ներկա տազնապալի ժամանակները⁴⁷: Անցյալում մենք հարցրեցինք նրա կարծիքը, բայց հենց իրադրության անկայուն վիճակի պատճառով նա չկարողացավ ընդառաջ գնալ մեր ցանկության: Բայց ահա համառոտ գծերով հարցի շուրջ նրա կատարած հետազոտությունների արդյունքը, որ գրավոր մեզ հաղորդեց.

«Հայախոս հույները ակրիտներ⁴⁸ են: Սերում են գտարյուն հույներից⁴⁹, որոնք Աղեքսանդր Մեծի ժամանակ, ինչպես և դրանից առաջ ու հետո, Հայաստանում հաստատված հույներից, բյուզանդացիների ժամանակ բյուզանդահայկական սահմանների վրա հաստատված սահմանապահ զինվորներից (ընտանի քներով կամ առանց), ինչպես նաև այն հայ տարրերից, որոնք հարել են հելլենականության՝ Ուղղափառ եկեղեցու հետ մերթ ընդ մերթ տեղի ունեցած միության փորձերի ժամանակ:

Սակայն եթե նկատի առնենք եկեղեցական պատմության գերմանացի լուրջ մասնագետների կարծիքն այն մասին, որ նախասիական անձայրածիր տարածություններում ուղղափառ մնացին միայն հունական ծագումով քրիստոնյաները, իսկ այլ ժողովուրդներին պատկանողները կրոնական տարբեր հերձվածների կրողների անվան տակ որպես այլազգիներ բաժանվեցին հունական-բյուզանդական մարմնից, ենթադրում ենք, որ վերևում հիշված եկեղեցիների միության փորձերի պտուղներն առատ չէին: Վերոնշյալ գերմանական տեսության համաձայն, այդ փորձերի նախաձեռնողները պիտի որ հայախոս դարձած հույներ լինեին, կամ էլ խառը ամուսնությունների հետևանքով հայացած: Արյունը քաշում է, տեսնո՞ւմ եք:

⁴² Տերտերյան (Հ. Բ.):

⁴³ Բադրիկ (Հ. Բ.):

⁴⁴ Մովսեսյան (Հ. Բ.):

⁴⁵ Զատիկյան (Հ. Բ.):

⁴⁶ Վահանյան (Հ. Բ.):

⁴⁷ Ըստ երևույթին, նկատի ունի 1946 թ. Հունաստանում սկսված քաղաքացիական պատերազմը (Հ. Բ.):

⁴⁸ Բյուզանդական շրջանում այդպես էին կոչվում սահմանապահ զինվորները (Հ. Բ.):

⁴⁹ Կոզանիի մետրոպոլիտի դիրքը նրան թույլ չի տալիս հանդես գալ որպես ազգությամբ հայ (Հ. Բ.):

Վերևում ասվածի հաստատումը մենք գտնում ենք հայ-հոռոմների լեզվի մեջ, որ տարբերվում է հայերի լեզվից, իսկ բազմաթիվ բառեր մատնում են նրանց հունական ծագումը: Պատառաքաղը, օրինակի համար, հայ-հոռոմները կոչում են տրիեն (τρίαιν, τρίαίνα)⁵⁰: Եվ ընդհանրապես ասած երկու համայնքների՝ հայ-հոռոմների և հայերի լեզվական հաղորդակցությունը դժվար է: Նրանց միջև ամենուրեք կազ ու կոնիվ էր, իսկ որտեղ որ նրանք համատեղ բնակվեն, նրանց երեխաների միջև չհայտարարված քարակոնիվ էր: Ես, ինքս, գրում է պատկերավոր կերպով Նորին սրբությունը,– գլխիս բավականաչափ սպիներ ունեմ:

Կարճ ասած,– շատ ճիշտ կերպով շարունակում է Նորին սրբությունը,– բյուզանդական պետության և Հայաստանի միջև հարաբերությունները դարեր շարունակ և՛ քաղաքական, և՛ զինվորական, և՛ ցեղային առումներով շատ բանում նման էին Ֆրանսիայի և Բելգիայի հարաբերություններին: Հայաստանը բյուզանդական պետության համար վահան էր ընդդեմ Արևելքից եկող վտանգների: Դրա համար էլ, երբ վերջին դարերում Բյուզանդիայի վատ քաղաքականության հետևանքով Հայաստանն ընկավ թուրքերի ձեռքը, Արևելքում մայր մտավ և բյուզանդական երկգլխանի արծիվը: Ի դեպ, իսավրացիների (կամ հայերի) և մյուս մեծագործ կայսրերի (որպես կանոն բարենորոգիչների) Չնշկիկի և մյուսների հարստությունները հենց այդ առաջադիմական, ազգային և գաղափարական տարրից են ծագում»:

Հայ-հոռոմներն այլևս անցան պատմության գիրկը, քանի որ վերապրածները և Հունաստանում հաստատվածները ի սկզբանե անտի ունենալով հունական վառ գիտակցություն, արդեն ձեռք բերեցին և հունարեն լեզուն: Ճանապարհորդն այսօր, որ այցելում է նրանց հայրենիքը, իզուր պիտի փնտրի Էզին քաղաքը: Այն Մուստաֆա Քեմալի պատվին վերանվանվեց Քեմալիե:

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ

Գ. Ա. Պասխալիդիսի և Գ. Ի. Անաստասիադիսի հոդվածների առնչությամբ կարևոր է այստեղ բերել տվյալներ Բենեդիկտոս Ադամանտիադիսի հրատարակած մի հոդվածից, որտեղ մեկ առ մեկ նշվում են Փոքրասիական թերակղզու հյուսիսարևմտյան հատվածի քրիստոնյաների քեմալականների կողմից կրած կորուստները՝ թուրքական թղթե լիրայով հաշված: Այստեղ նշվում են նաև Բյութանիայի մեզ արդեն հայտնի Խուդի, Օրթաքոյ, Ֆունդուկլի, Գեյվե, Վուրխանիե, Քյուպի և Սապի հայկական գյուղերի բնակիչների թիվը, ինչպես և նրանց թողած ունեցվածքի արժեքը: Հոդվածագիրը կանգ է առնում եկեղեցական յոթ թեմերի՝ Քաղկեդոնի, Նիկիայի, Նիկումեդիայի, Պրուսայի, Կյուզիկոսի, Պրիկոնիսոսի և Դարդանեղի թեմերի գյուղերի վրա: Քաղկեդոնի թեմում Ադամանտիադիսը հիշում է մեկ հայկական գյուղ (17-ի մեջ՝ 10-րդը)՝ Ֆունդուկլին, որ նա կոչում է նաև Աշաա քոյ, Լևենդքոյ և Կաստար ու ցույց տա-

⁵⁰ Հունարեն նշանակում է եռաժանի (Հ. Բ.):

լիս, որ այդ գյուղում ապրում էր 400 հայ ընտանիք, որոնց թողած ունեցվածքի արժեքն էր՝ 250.000 թուրքական լիրա (թ. լ.) համայնքինը, և 1.200.000 թ. լ. անձնականը: Նիկիայի թեմում նա հիշատակում է 27 գյուղ, որոնցից 15-ից 20-րդը հայկական, ընդ որում Գեյվեում (և կայարանում) բնակվում էր 200 հայ ընտանիք, նրանց թողած ունեցվածքը՝ 180.000 թ. լ. համայնքինը և 600.000 թ. լ. անձնականը: Օրթաքյոյում բնակվում էր 1200 հայ ընտանիք, թողած ունեցվածքը՝ 800.000 թ. լ. համայնքինը և 7.200.000 թ. լ. անձնականը: Վուրխանիեում ապրում էր 600 հայ ընտանիք, թողած ունեցվածքը՝ 300.000 թ. լ. համայնքինը և 1.800.000 թ. լ. անձնականը: Խուդիում բնակվում էր 800 հայ ընտանիք, թողած ունեցվածքը՝ 450.000 թ. լ. համայնքինը և 4.000.000 թ. լ. անձնականը: Քյուպիում կար 120 հայ ընտանիք, թողած ունեցվածքը՝ 60.000 թ. լ. համայնքինը և 360.000 թ. լ. անձնականը: Եվ, վերջապես, Սասլիում բնակվում էր 80 հայ ընտանիք, որոնց թողած ունեցվածքն հաշվվում էր՝ 30.000 թ. լ. համայնքինը և 240.000 թ. լ. անձնական ունեցվածքը:

Այսպիսով՝ փոքրասիական աղետից անմիջապես առաջ Քաղկեդոնի և Բյութանիայի շրջանում հիշվում է հայկական յոթ գյուղ: Կարևորն այստեղ այն է, որ Ադամանտադիսը հայ-հոռոմների մասին խոսք չի անում, բոլորին հայ է համարում, և ճիշտ է անում, քանզի դժվար թե այս ամբողջ հայությունը՝ 3400 ընտանիք, հայ-հոռոմներից բաղկացած լիներ: Նրանց կրած վնասն այսպիսով եղել է 2.070.000 թ. լ. համայնքինը և 15.400.000 թ. լ. անձնական ունեցվածքը: Ադամանտադիսի հողվածը վերնագրված է *Βενεδικτου' Αδαμαντιάδη, "Εκθεσις ἐπὶ τὰς ἀνθρωπίνους ὑπάρξεις καὶ εἰς χρῆμα ἀπωλείας συνεπίερα τῆς ἐκκριζώσεως τοῦ Ἑλληνισμοῦ τῆς Βορειοδυτικῆς Μικρᾶς Ἀσίας, "Μικρασιατικά Χρονικά"* τόμος 7ος, Αθήναι 1957, σελ. 97 – (Բենեդիկտոս Ադամանտադիս. Ջեկուցագիր մարդկային և նյութական կորուստների մասին, Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան շրջանների հույն բնակչության արմատախիլ արվելու հետ կապված.– «Փոքրասիական Տարեգիրք», հատոր 7, Աթենք, 1957, էջ 97):